# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 40

13 փետրվարի 2020 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով *որոշում եմ*

1.Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի առաջին եռամսյակի <<0>> թիվը փոխարինել <<1000,0>> թվով:

2.Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 01, դաս 01 (աղբահանում) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի առաջին եռամսյակի <<6650,0>> թիվը փոխարինել <<5432,0>> թվով:

3.Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 04, դաս 01 (փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<27000,0>> թիվը փոխարինել <<25300,0>> թվով, առաջին և երկրորդ եռամսյակների <<17000,0>> թվերը փոխարինել <<15300,0>> թվերով, երրորդ և չորրորդ եռամսյակների <<27000,0>> թվերը փոխարինել <<25300,0>> թվով:

4.Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01(ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1000,0>> թվով, 5129 (այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<100,0>> թվով:

5. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ նորոգում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<350,0>> թվով,

5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<250,0>> թվով, 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի առաջին եռամսյակի <<300,0>> թիվը փոխարինել <<500,0>> թվով, 4214 (կապի ծառայություններ) հոդվածի առաջին եռամսյակի <<18,0>> թիվը փոխարինել <<36,0>>:

6. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (մարզադպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի առաջին եռամսյակի <<100,0>> թիվը փոխարինել <<150,0>> թվով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար — Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 10
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

# ՈՐՈՇՈՒՄ N 41

13 փետրվարի 2020 թվականի

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 14-րդ, 15-րդ և 26-րդ կետերի դրույթներով՝ ***որոշում եմ***

1. ԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/01 ծածկագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Հակակարկտային կայանների» ձեռքբերման նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Հովհաննես Ալեքյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդամներ՝ Աղավնի Առաքելյան –Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Լուիզա Վարժապետյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Առաքել Հայրապետյան– Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ

Սաթենիկ Յուզբաշյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Հակակարկտային կայանների» ձեռքբերման հայտարարության և հրավերի տեքստը հաստատելու համար գնահատող հանձնաժողովի առաջին նիստն հրավիրել 2020 թվականի փետրվարի 13-ին, ժամը 16:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար — Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 13
քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 42

13 փետրվարի 2020 թվականի

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 14-րդ, 15-րդ և 26-րդ կետերի դրույթներով ***որոշում եմ***

1. ԱՀ-ԳՀԾՁԲ-20/02 ծածկագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի արտաքին լուսավորության ցանցի ընթացիկ սպասարկման և պահպանման ծառայության» ձեռքբերման նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Հովհաննես Ալեքյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (**ԳՊ/ԳԱՊ +ԳՊ/ԳԱ**)

Անդամներ՝ Նարեկ Նիկոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ (**ԳՊ/ԳԱ**)

Լուիզա Վարժապետյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (**ԳՊ/ԳԱ**)

Մանուշակ Մարտիրոսյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (**ԳՊ/ԲԱ**)

Սաթենիկ Յուզբաշյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (**ԳՊ/ԲԱ**)։

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի արտաքին լուսավորության ցանցի ընթացիկ սպասարկման և պահպանման ծառայության» ձեռքբերման հայտարարության և հրավերի տեքստը հաստատելու համար գնահատող հանձնաժողովի առաջին նիստն հրավիրել 2020 թվականի փետրվարի 13-ին, ժամը 15:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով։

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար — Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 13
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, p.Մարալիկ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 43-Ա

13 փետրվարի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ «ԱՅՈ» ԵՎ «ՈՉ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» 21-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասերի դրույթներով *որոշում եմ՝*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տարածքում Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «ԱՅՈ» ԵՎ «ՈՉ» քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառներ փակցնելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը.

1.Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր նյութեր կարող են փակցնել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ բնակավայրում

1) Ջերժինսկի փողոցի N10 բազմաբնակարան շենքի արևմտյան պատին -2.0մx3.0մ
2) Ջերժինսկի փողոցի N11 բազմաբնակարան շենքի արևմտյան պատին -2.0մx3.0մ
3) Ջերժինսկի փողոցի N12 բազմաբնակարան շենքի արևմտյան պատին -2.0մx2.0մ
4) Ջերժինսկի փողոց N 13 բազմաբնակարան շենքի արևմտյան պատին -1.5մx2.5մ
5) Ջերժինսկի փողոցի N16 բազմաբնակարան շենքի արևելյան պատին-2.0մx3.0մ
6) Ջերժինսկի փողոց N18 բազմաբնակարան շենքի արևելյան պատին -2.0մx3.0մ
7) Ջերժինսկի փողոց N20 բազմաբնակարան շենքի հարավային պատին-3.0մx3.0 մ
8) Մաղաքյան 1ա շենքի հարավային պատին -2.0մx2.0մ

9) Մադաթյան 1 շենքի հյուսիսային պատին-1.5մx2.5մ

10) Մադաթյան 2 շենքի հարավային պատին -2.5մx3.0մ

11)Մադաթյան 3 շենքի հարավային պատին 2.0մx3.0մ

12)Մադաթյան 4 շենքի հարավային պատին 2.5մx2.5մ

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրի 1-ին փողոցի 24 շենքի հյուսիսային պատին-2.0մx3.0մ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրի 8-րդ փողոցի 4-րդ շենքի հարավային պատին-2.0մx3.0մ:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 13-րդ փողոցի 7-րդ շենքի չգործող Մշակույթի տան հարավային պատին-2.0մx3.0մ:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի 1-ին փողոց 38 հասցեում գտնվող չգործող Մշակույթի տան արևելյան պատին -2.0մx4.0մ

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի 4-րդ փողոցի 35 հասցեում գտնվող չգործող Մշակույթի տան արևելյան պատին-2.0մx3.0մ:

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 4-րդ փողոցի 17/1հասցեում գտնվող չգործող մանկապարտեզի շենքի արևմտյան պատին-3.0մx205մ:

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 1-ին փողոցի 37 հասցեում գտնվող շենքի արևմտյան պատին-1.5մx6.0մ:

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձորակապ բնակավայրի 1-ին փողոցի 16 շենքի արևելյան պատին-2.5մx3.5մ:

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Քարաբերդ բնակավայրի 1-ին փողոցի 31 շինության արևելյան պատին-2.0մx3.0մ:

11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի 2-դ փողոցի 6-րդ հասցեում գտնվող շինության արևելյան պատին-3.0մx2.0մ ։

12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լանջիկ բնակավայրի 2-րդ փողոցի 29 հասցեում գտնվող ակումբի շենքի հյուսիսային պատին-2.0մx3.0մ:

13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սարակապ բնակավայրի 1-ին փողոցի 1-ին նրբանցքի 5-րդ շինության արևելյան պատին-2.0մx3.0մ:

14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջրափի բնակավայրի 6-րդ փողոցի 13-րդ շենքի արևելյան պատին-2.0մx3.0մ:

15. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Աղին բնակավայրի 1-ին փողոցի 5-րդ շենքի հյուսիսային պատին-2. 0մx3. 0մ:

16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրի 1-ին փողոցի 8-րդ հասցեում գտնվող շինության հարավային պատին-2.0մx6.0մ:

17. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր բնակավայրի 2-րդ փողոց 1-ին նրբանցք 5-րդ հասցեում գտնվող նախկին մշակույթի տան արևելյան պատին-2.0մx2.0մ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար　　　Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 13

Քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 44

13 փետրվարի 2020 թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՔՎԵԻ «ԱՅՈ» ԵՎ «ՈՉ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» 19-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի տարածքում Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «ԱՅՈ» ԵՎ «ՈՉ» քարոզչության կողմերին անվճար հիմունքներով տրամադրել դահլիճներ՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի

մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 13

քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 44 ՈՐՈՇՄԱՆ

**2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերին 2020 անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների**

Անի համայնք

| հ/հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մշակութային երիտասարդական կենտրոն | ք. Մարալիկ, Հր. Շահինյան 94 | 550 | ցանկացած օր՝ ժամը 10.00-14.00 | Վալերիկ Սահակյան հեռ. 093 507579 | |
| 2 | Արվեստի դպրոց | ք. Մարալիկ Մաղաթյան 2 | 60 | ցանկացած օր՝ ժամը 10.00-14.00 | Սոֆիկ Հակոբյան հեռ.093 971670 | |
| 3 | Աղինի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Աղին, 5-րդ փողոց, շենք 25 | 50 | աշխատանքային օրերին ժամը 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Էլբակյան Խաչիկ հեռ .093 839839 | |
| 4 | Հանդիսությունների սրահ | գ. Անիավան, 8-րդ փողոց, շենք 11 | 80 | շաբաթ և կիրակի օրերին 12.00-14.00 | Մարտիրոս Միրոյան հեռ. 093 40 18 76 | |
| 5 | Անիպեմզայի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Անիպեմզա, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, շենք 6 | 120 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Նազարյան Հասմիկ հեռ 093805209 | |
| 6 | Բագրավանի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Բագրավան, 6-րդ փողոց, շենք 8 | 50 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Հերսիկ Հարությունյան հեռ. 094 158383 | |
| 7 | Գուսանագյուղի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Գուսանագյուղ, 1-ին փողոց, շենք 8 | 100 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Ղազարյան Սեդա հեռ. 095 02-90-96 | |
| 8 | Իսահակյանի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Իսահակյան, 5-րդ փողոց, շենք 6 | 65 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Գնել Հարությունյան հեռ . 093 410129 | |
| 9 | Լանջիկի համայնքային կենտրոնի դահլիճ | գ. Լանջիկ, 2-րդ փողոց, շենք 29 | 132 | ցանկացած օր ժամը 10.00-17.00 | Մինասյան Դավիթ հեռ. 077 644973 | |
| 10 | Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Լուսաղբյուր,4-րդ փողոց, շենք 17 | 60 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Արտուշ Միքայելյան հեռ. 093 736010 | |
| 11 | Հայկաձորի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Հայկաձոր, 4-րդ փողոց, շենք 1 | 80 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Վարդան Սարգսյան հեռ. 093 030772 | |
| 12 | Համայնքային կենտրոնի դահլիճ | գ. Ձիթհանքով, 4-րդ փողոց, շենք 21 | 300 | ցանկացած օր ժամը 10.00-17.00 | Բալաբեկյան Ռուստամ հեռ. 094 415741 | |
| 13 | Մշակույթի տան դահլիճ | գ. Ձորակապ, 1-ին փողոց, շենք 16 | 95 | ցանկացած օր ժամը 10.00-17.00 | Պողոսյան Գագիկ հեռ. 077 628300 | |
| 14 | Շիրակավանի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Շիրակավան, 4-րդ փողոց, շենք 31 | 40 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Նաթելա Համբարյան հեռ. 094 932126 | |

| հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը (հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինությունը տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 15 | Ջրափիի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Ջրափի, 7-րդ փողոց, շենք 19 | 80 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Մարիամ Յովհաննիսյան հեռ. 094 343539 | |
| 16 | Սարակապի միջնակարգ դպրոցի դահլիճ | գ. Սարակապ, 1-ին փողոց, շենք 15 | 70 | աշխատանքային օրերին 18.00-ից հետո, հանգստյան օրերին ցանկացած ժամի | Միսակ Ծառուկյան հեռ. 093 358393 | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ Ու Մ N 45

17 փետրվարի 2020 թվական

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթներով՝ ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար մեկ անձից գնման ընթացակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կարիքների համար «ջահի» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Նարեկ Նիկոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Տոնական Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի էլեկտրիկ

Հովհաննես Ալեքյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Շուշանիկ Բոթոյանին:

3. Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի փետրվարի 17-ին, ժամը 16:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 17
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 46

17 փետրվարի 2020 թվական

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի դրույթներով՝ ***որոշում եմ***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի 2020 թվականի կարիքների համար մեկ անձից գնման ընթացակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար կենցաղային տեխնիկաների ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Եստեր Արշակյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Սառնաղբյուրի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Անդամներ՝ Լուսինե Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի «Ռոմի Բարոնյանի» անվան մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Սաթենիկ Յուզբաշյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Շուշանիկ Բոթոյանին:

3. Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2020 թվականի փետրվարի 17-ին, ժամը 16:30-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 2 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար — Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 17
քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 47

17 փետրվարի 2020 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՅԱՆԵ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԵՆԱԿԵՏԻ ՇԵՆՔԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀՆ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի բնակիչ Գայանե Վարազդատի Եղիազարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հրանտ Շահինյան փողոց N 11 հասցեում գտնվող հենակետի շենքը /ծածկագիր 08-003-0043-0019-001-000/, առևտրի սրահը /ծածկագիր 08-003-0043-0019-002-000/ և 0. 1329 հեկտար մակերեսով հողամասը /սեփականության վկայական N 24102013-08-0051/ անհրաժեշտություն է առաջացել բաժանել երկու մասի.

1. Գայանե Վարազդատի Եղիազարյանին պատկանող առևտրի սրահը և S=0. 03485 հեկտար հողամասը հասցեավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի քաղաք Մարալիկ Հրանտ Շահինյան փողոց N 11/1:

2 Գայանե Վարազդատի Եղիազարյանին պատկանող հենակետի շենքը և S=0.09805 հեկտար հողամասը, հասցեավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայքն քաղաք Մարալիկ Հրանտ Շահինյան փողոց N 11:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 17

Քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 48

17 փետրվարի 2020 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՍՆԱԳՈՄԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում գտնվող Արայիկ Վարուժանի Դարբինյանին պատկանող անասնագոմը համարակալել և հասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Մարալիկ քաղաք Կոլտնտեսականների փողոց, 2-րդ նրբանցք, 2/2:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 17

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 49

17 փետրվարի 2020 թվական

## ԱՆԱՀԻՏ ՌԱՖԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 16-ի թիվ 5 արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի բնակչուհի Անահիտ Ռաֆիկի Հովհաննիսյանի խնամակալությունը Սամվել Աղասու Աղաբաբյանի /ծնված 2006 թվականի փետրվարի 2-ին / նկատմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 17

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 50
18 փետրվարի 2020 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Անիչկա Արծրունի Թաղևոսյանի (ծնված 04.04.1963 թվականին) կողմից լրազորված անձ Դերենիկ Նաիրի Հայրապետյանի (ծնված 10.10.1990 թվականին) դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի 2-րդ փողոց թիվ 24 հասցեում գտնվող հողամասի ընդհանուր մակերեսը փաստացի կազմում է 0,11635 հեկտար /ծածկագիր 08-072-0014-0017/, որը Անիչկա Արծրունի Թաղևոսյանի սեփականության իրավունքով հողամաս է /հիմք հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 20.01.1991թվականի N 1 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01 փետրվարի 2013 թվականի վճռի գործ ՇԴ3 0295/02/12/:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը մայիսի 15-ը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի 2-րդ փողոց թիվ 24 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի ներառված Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հողամասը ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով ***որոշում եմ***

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի 2-րդ փողոց թիվ 24 հասցեում գտնվող գույքային իրավունքների նկատմամբ սեփականության իրավունքը Անիչկա Արծրունի Թաղևոսյանի (ծնված 04.04.1963 թվականին) բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար օրինական հատկացված 0.11635 հեկտար մակերեսով հողամասի չափով ճանաչել նրա սեփականությունը և դրա վրա գտնվող մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված շենք-շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 18

քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 51

18 փետրվարի 2020 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համանքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 8 որոշումը

*Որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համանքի սեփականություն հանդիսացող, Շիրակավան բնակավայրի վարչական շենքի երկրորդ մասնաշենքը՝ /որը չի օգտագործվում և չկա բավարար պայմաններ/՝ նկուղով՝ 256,01 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով և վարչական շենքի առաջին մասնաշենքի առաջին հարկից 32,94 քառակուսի մետր, ընդամենը՝288,95 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքը անհատույց, տաս տարի ժամկետով օգտագործման տրամադրել <<Անի տեքստիլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, կարի արտադրամաս բացելու նպատակով:
2. Առաջարկել <<Անի տեքստիլ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ շենքային պայմանների պահպանման և բարելավման նպատակով ապահովել ներդրումներ:
3. Սահմանել, որ տարածքի անհատույց օգտագործման պայմաններն ու պահանջները կարգավորվում են պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար — Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 18

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ Ու Մ N 52

18 փետրվարի 2020 թվական

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող /ծածկագիր 08-090-0016-0006-001/ շինությունը համարակալել և հասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Շիրակավան բնակավայր 4-րդ փողոց, թիվ 33:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 18

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 53

18 փետրվարի 2020 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ջիթհանքով բնակավայրում գտնվող Անիչկա Արծրունի Թադևոսյանին պատկանող 0,11635 հեկտար տնամերձ հողամասը, բնակելի տունը և կից շինությունները համարակալել և հասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Ջիթհանքով բնակավայր 2-րդ փողոց թիվ 24:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 18

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 54

19 փետրվարի 2020 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով ***որոշում եմ***՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-100-0083-0002/ Լեռնիկ Եղիկի Սողոմոնյանին, Ռոզա Մերուժանի Սարգսյանին, Արթուր Լեռնիկի Սողոմոնյանին և Արմինե Լեռնիկի Սողոմոնյանին պատկանող բնակելի տունը և տնամերձ հողամասը համարակալել և հասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Սառնաղբյուր բնակավայր 9-րդ փողոց, 4-րդ նրբանցք, թիվ 14:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 19

քաղաք Մարալիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

ՈՐՈՇՈՒՄ N 55

20 փետրվարի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի վարչական վարույթ իրականացնող հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 17 որոշման 1-ին կետի բովանդակությունում նշված «Նարեկ Նիկոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Նարեկ Նիկոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ» բառերով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար`** **Արտակ Գևորգյան**

2020 թվականի փետրվարի 20

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  N 56

20 փետրվարի 2020 թվականի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 21 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով *որոշում եմ*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի հարկերի, եկամուտների գանձման հարցերով զբաղվող հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 21 որոշման 1-ին կետի բովանդակությունում նշված «Ստեփան Հովհաննիսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «Ստեփան Հովհաննիսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի փոխտնօրեն» բառերով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար — Արտակ Գևորգյան

2020 թվականի փետրվարի 20

քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 57

20 փետրվարի 2020 թվական

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 15 որոշման վերնագիրը և բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալության տրամադրելու համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին»:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար** **Արտակ Գևորգյան**

2020 թվական փետրվարի 20

քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 58

20 փետրվարի 2020 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 19 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի,34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով ***որոշում եմ***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աճուրդային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 19 որոշման վերնագիրը և բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝** **Արտակ Գևորգյան**

2020 թվական փետրվարի 20

քաղաք Մարալիկ